



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

# ՔՆՆԻՉ



7/2017

ISSN 1829-4766

## ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՄԱՀՎԱՆ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

### Ղամբարյան Արթուր

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ,  
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

### Ավետիսյան Էլեն

«Հայաստանում Ֆրանսիական համալսարան» հիմնադրամի  
իրավաբանական ֆակուլտետի ուսանողուհի

ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ կարգավորվում են մեղադրյալի մահվան փաստով ծագող առանձին հարաբերություններ, օրինակ՝ անձի մահվան հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելը կամ նրա իրավունքների պաշտպանության նպատակով քրեական վարույթը շարունակելը<sup>1</sup>, սակայն այս ոլորտում առկա են մի շարք հարցեր, որոնք ունեն իրավական կարգավորման անհարժեշտություն:

Սույն հոդվածի բովանդակությունն են կազմում հետևյալ հարցերը՝

#### 1. Պատմական ակնարկ

1.1. Նախահեղափոխական շրջանի քրեական դատավարությունը

1.2. Խորհրդային ժամանակաշրջանի քրեական դատավարությունը

#### 2. Համեմատական վերլուծություն

2.1. Ռուսաստանի քրեական դատավարությունը

2.2. Բելառուսի քրեական դատավարությունը

2.3. Էստոնիայի քրեական դատավարությունը

2.4. Մոլդովայի քրեական դատավարությունը

2.5. Լատվիայի քրեական դատավարությունը

#### 3. Մահվան հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելը հայկական իրավունքում

3.1. Անձի մահվան հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելը

3.2. Ենթադրյալ հանցանք կատարած անձի մահվան փաստի ապացուցումը

3.3. Ո՞վ կարող է մահացած անձի իրավունքները վերականգնելու համար պահանջել շարունակելու քրեական վարույթը

3.4. Քրեական վարույթը շարունակելու պահանջը ներկայացնելու դատավարական ձևը

#### 4. Ամբաստանյալի մահը և դատական ակտը բողոքարկելը

4.1. Ամբաստանյալի մահը՝ դատավճիռը հրապարակելուց հետո՝ առանց այն բողոքարկելու

<sup>1</sup> Ղամբարյան Ա. Քրեական հետապնդումը (մեղադրանքը) մինչդատական վարույթում: Ուսումնական ձեռնարկ: Եր.: 2016, էջ 136:

4.2. Ամբաստանյալի մահը՝ դատավճիռը հրապարակելուց հետո՝ մինչև այդ բողոքարկելով այն

## 5. Առաջարկություններ

### 1. Պատմական ակնարկ

1.1. Նախահեղափոխական շրջանի քրեական դատավարությունը:

Նախահեղափոխական դատավարագիտության մեջ քրեական վարույթի դադարեցնելու հիմքերը բաժանվում էր երկու խմբի՝ ֆիզիկական և իրավաբանական: Մեղադրյալի մահը դիտվում էր որպես քրեական վարույթը դադարեցնելու ֆիզիկական պատճառ (ֆիզիկական հիմք): Մեղադրյալի մահվան փաստը հաստատվում էր մահվան վկայականով (իրավաբանական հիմք):

Թե՛ քրեական իրավունքի գիտությունը և թե՛ քրեական օրենսդրությունն ամրագրում էր անձնական քրեական պատասխանատվության սկզբունքը, ուստի դատապարտյալի մահվան դեպքում դատավճիռը չէր կարող ի կատար անվել:

Միաժամանակ, մահացած անձի իրավահաջորդները կրում էին հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման, ինչպես նաև հանցագործությամբ ձեռք բերված գույքը տուժողին հետ վերադարձնելու պարտականությունը<sup>1</sup>: Մեղադրյալի մահվան դեպքում քրեական հետապնդումը դադարեցվում էր

միայն մահացած մեղադրյալի մասով<sup>2</sup>: 1864թ. քրեական դատավարության կանոնագրքի 26-րդ հոդվածի համաձայն թույլատրվում է անմեղ դատապարտյալի պատվի և իրավունքների վերականգնում բոլոր ժամանակներում՝ անկախ վաղեմության ժամկետներից և դատապարտյալի մահից:

1.2. Խորհրդային ժամանակաշրջանի քրեական դատավարությունը:

1922 և 1923 թթ. ՌՍՖՍՀ-ի քրեական դատավարության օրենսգրքերի կարգավորումների համաձայն՝ քրեական գործ չի կարող հարուցվել, իսկ հարուցված գործի վարույթը ենթակա է կարճման մեղադրյալի մահվան դեպքում, բացառությամբ՝ եթե առկա է դատավորների հանցավոր չարաշահումները, ինչպես նաև սուտ ցուցմունքները, փորձագետի եզրակացությունը և այլ ապացույցների կեղծված փաստը հաստատող մեկ այլ օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, որը գործը վերսկսելու հիմք է: Ինչպես տեսնում ենք, ի տարբերություն նախահեղափոխական շրջանի իրավակարգավորումների, որտեղ մեղադրյալի մահվան դեպքում քրեական վարույթը շարունակելու որևէ բացառություն նախատեսված չէր, 1922 և 1923 թթ. ՌՍՖՍՀ-ի քրեական դատավարության օրենսգրքերը վարույթը շարունակելու համար բացառություն սահմանում էին, սակայն այն չէր վերաբերում մահացած մեղադրյալի իրավունքները վերականգնելու պահան-

<sup>1</sup> Мирлес А. Краткий курс русского уголовного процесса. Киев, Изд. И. И. Самоненко, 1912. С 45.

<sup>2</sup> Духовской М. П. Русский уголовный процесс. М.: Изд. М.В Ключина, 1910. С 170.

ջին:

1958թ. «Քրեական դատավարության օրենսդրության հիմունքների 5-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ քրեական գործ չի կարող հարուցվել, իսկ հարուցված գործի վարույթը ենթակա է կարճման մեղադրյալի մահվան հիմքով, բացառությամբ այն դեպքերի, երբ քրեական վարույթն անհրաժեշտ է վերսկսել անձի իրավունքների վերականգնման համար կամ ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ:

## **2. Համեմատական վերլուծություն**

*2.1. Ռուսաստանի քրեական դատավարությունը:*

Ռուսաստանի Դաշնության քր. դատ. օր-ի 24-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անձը մահացել է, բացառությամբ՝ երբ գործի վարույթն անհրաժեշտ է մահացածի իրավունքների վերականգնման համար:

*2.2. Բելառուսի քրեական դատավարությունը:*

Բելառուսի Հանրապետության քր. դատ. օր-ի 29-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ քրեական գործ չի կարող հարուցվել, իսկ հարուցված գործի վարույթը ենթակա է կարճման մեղադրյալի մահվան դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ քրեական վարույթն անհրաժեշտ է անձի իրա-

վունքների վերականգնման համար:

Ռուսաստանի Դաշնության և Բելառուսի Հանրապետության սահմանադրական դատարանները համապատասխանաբար 2011թ. N 16 որոշմամբ և 2014թ. N 3-928 որոշմամբ վերը նշված նորմերը ճանաչել են հակասահմանադրական, այն հիմնավորմամբ, որ օրենսդիրը քրեական վարույթ իրականացնող մարմնին թույլ է տալիս մեղադրյալի մահվան դեպքում քրեական գործ չհարուցել, իսկ հարուցված քրեական գործը կարճել առանց մահացած անձի մերձավոր ազգականների համաձայնության:

Բելառուսի Հանրապետության սահմանադրական դատարանն արդարացիորեն նշել է, որ քրեական գործի կարճման դեպքում դադարում է նաև մահացած անձի մեղավորության հետագա ապացուցման գործընթացը, իսկ եթե կասկածները (մեղադրանքը)՝ անձի կողմից հանցանք կատարելու վերաբերյալ, նրա վրայից չեն հանվում, ապա դա հակասում է Սահմանադրությամբ ամրագրված անմեղության կանխավարկածին: Միաժամանակ, մահացած մեղադրյալն օբյեկտիվ պատճառով զրկված է իր պաշտպանության իրավունքն իրականացնելու հնարավորությունից:

Բելառուսի Հանրապետության սահմանադրական դատարանը, հակասահմանադրական ճանաչելով այդ նորմը, հիմք է ընդունել նաև քաղաքացիների՝ օրենքի առջև հավասարության սկզբունքը, քանի որ տուժողի մահվան դեպքում մերձավոր ազգականներն օժտված են

վերջինիս իրավունքներով և պարտականություններով, իսկ մահացած մեղադրյալի մերձավոր ազգականները՝ նման իրավունքներով օժտված չեն: Բելառուսի Հանրապետության սահմանադրական դատարանը միաժամանակ առաջարկել է մշակել մահացած մեղադրյալի քրեական վարույթի վերաբերյալ օրենքի նախագիծ, որով կնախատեսվեն քրեական վարույթի նոր մասնակիցներ՝ կասկածյալ, մեղադրյալ, նրանց ներկայացուցիչներ, ինչպես նաև մահացած կասկածյալի, մեղադրյալի ներկայացուցիչներ:

*2.3. Էստոնիայի քրեական դատավարությունը:*

Էստոնիայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքի 199-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ քրեական վարույթի շարունակություն՝ մահացած անձի իրավունքների վերականգնման համար կարող է պահանջել մահացած մեղադրյալի (կասկածյալի) ներկայացուցիչը: Այսինքն մահացած անձի ներկայացուցիչին տրվել է դատավարության մասնակցի կարգավիճակ:

*2.4. Մոլդովայի քրեական դատավարությունը:*

Մոլդովայի Հանրապետության քր. դատ. օր-ի 69-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ կասկածյալի կամ մեղադրյալի մահվան դեպքում իրավունքների վերականգնման համար՝ մասնավորապես մահացածի բարի համբավի վերականգնման, քրեական գործի վարույթի շարունակություն կարող են պահանջել մահացած անձի մերձավոր

ազգականները և այլ անձինք:

*2.5. Լատվիայի քրեական դատավարությունը:*

Քննարկվող հարցի վերաբերյալ առավել մանրամասն կարգավորումներ են նախատեսված Լատվիայի քր. դատ. օր-ով, որի 56-րդ գլուխը նվիրված է մահացած մեղադրյալի իրավունքների վերականգնման քրեական վարույթին, որտեղ մասնավորապես ամրագրված են մահացած մեղադրյալի (կասկածյալի) օրինական ներկայացուցիչների և մերձավոր ազգականների, ինչպես նաև այլ անձանց, ովքեր ունեն մահացած անձի անմեղությունն ապացուցող փաստեր, կարճման որոշումից հետո մեկ տարվա ընթացքում պահանջելու շարունակել մահացած անձի վերաբերյալ քրեական վարույթը և բողոքարկել այս վարույթի ընթացքում կայացված դատավճիռը: Վարույթը շարունակելու դիմումը կարող է ներկայացվել նաև այն դեպքում, երբ կասկածյալը կամ մեղադրյալը մահացել է, սակայն վարույթ իրականացնող մարմինը դեռ չի կարճել քրեական վարույթը: Քրեական վարույթ իրականացնող մարմինը մահացած անձի իրավունքների վերականգնման նպատակով վարույթը շարունակելու դիմումը ստանալու պահից 10 օրվա ընթացքում ուսումնասիրում է նրանում առկա փաստերը և համեմատելով վարույթում արդեն իսկ առկա նյութերի հետ կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

*Ստաջին՝* վերացնել քրեական վարույթը կարճելու մասին որոշումը և շարունակել քրեական վարույթը՝ մահացած

անձի իրավունքների վերականգնման համար: Այս դեպքում, վարույթ իրականացնող մարմինը պետք է որոշում կայացնի մահացած անձի իրավունքների վերականգնման վարույթը շարունակելու մասին դիմում ներկայացրած անձին վարույթում ներգրավվելու և վերջինիս իր իրավունքների մասին իրազեկելու նպատակով: Անձի ներկայացրած դիմումում առկա տեղեկությունը ուսումնասիրելու համար վարույթ իրականացնող մարմինը պետք է մինչդատական վարույթում իրականացնի անհրաժեշտ ընթացակարգային գործողություններ:

*Երկրորդ՝* մերժել դիմումը: Ընդ որում, քրեական վարույթ իրականացնող մարմինը դիմում ներկայացնողին պետք է անմիջապես ուղարկի որոշման պատճենը, որպեսզի վերջինս դիմումի մերժման դեպքում հնարավորություն ունենա բողոքարկել որոշումը:

Մինչդատական վարույթում մահացած մեղադրյալի (կասկածյալի) արդարացման դեպքում քննիչը հսկող դատախազի համաձայնությամբ կամ հսկող դատախազը քրեական վարույթի կարճամամբ կարող է վարույթի նյութերը ուղարկել հետաքննության մարմնին՝ մեղավոր անձին պարզելու նպատակով:

Քրեական վարույթ իրականացնող մարմինը պետք է որոշման պատճենն անմիջապես ուղարկի դիմում ներկայացնող անձին՝ նրան տեղեկացնելով իր իրավունքների մասին՝ ծանոթացնել գործի նյութերին և պարզաբանել 10 օրվա ընթացքում որոշումը դատարանում բողոքարկելու նրա իրավունքը:

Լատվիայի քր. դատ օր-ը քննարկվող հարցի վերաբերյալ կարգավորումներ է նախատեսում ոչ միայն մինչդատական, այլ նաև դատական փուլում: Մասնավորապես՝ մահացած անձի իրավունքների վերականգնման վարույթում գործը քննելիս դատարանը.

*Առաջին՝* որոշում է արդյոք կատարվել է հանցանք և արդյոք այդ հանցանքը կատարել է այն անձը, ում նկատմամբ իրականացվում է վարույթ,

*Երկրորդ՝* պարզում է հանցանքի կատարման մեջ մահացած անձի մասնակցության հիմնավորված չլինելու հանգամանքը, կամ հավաստիանալով, որ քրեական վարույթ իրականացնելու հանգամանքները բացակայում են որոշում է կայացնում քրեական վարույթը կարճելու մասին՝ արդարացնելով մահացած անձին,

*Երրորդ՝* պարզում է, որ կատարվել է հանցանք, և որ անձն ում նկատմամբ իրականացվել է վարույթ՝ ինքն է կատարել հանցանքը, որոշում է կայացնում քրեական վարույթի կարճման մասին՝ առանց արդարացնելու համապատասխան անձին,

*Չորրորդ՝* պարզում է, որ հանցանքը կատարել է ոչ թե մահացած անձը, այլև մեկ այլ անձ, չեղյալ է համարում մահացած անձի նկատմամբ քրեական վարույթը և քրեական գործը ուղարկում դատախազություն՝ քրեական վարույթի շարունակության համար:

Ինչ վերաբերում է դատական ակտի բողոքարկմանը՝ Լատվիայի օրենսդրությամբ սահմանված են ընթացակար-

գեր, ըստ որի անձն, ով պահանջել է շարունակել քրեական վարույթը, իրավունք ունի բողոքարկելու՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների որոշումները:

### **3. Մահվան հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելը հայկական իրավունքում**

*3.1. Մահվան հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելը:*

ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով սահմանված հիմքի՝ քրեական հետապնդման ենթարկվող անձի մահվան դեպքում, այդ անձի նկատմամբ քրեական հետապնդումը պետք է դադարեցվի, իսկ քրեական գործի վարույթը՝ կարճվի: Նշվածից բացառություն կարող է լինել միայն այն դեպքերում, երբ տվյալ գործով վարույթի իրականացումն անհրաժեշտ է. ա) մահացածի իրավունքների վերականգնման համար, բ) այլ անձանց նկատմամբ նորի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար: ՀՀ վճռաբեկ դատարանը 13.09.2013թ. թիվ ԱՐԴ/0150/01/12 գործով նշել է. «Եթե բացառություն կազմող վերագրյալ անհրաժեշտությունը բացակայում է, ապա անձի մահվան դեպքում նրա նկատմամբ քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, իսկ քրեական գործի վարույթը՝ կարճման, անկախ նրանից, թե գործը քննության որ փուլում է գտնվում»:

Քրեական հետապնդումը դադարեցնելու այս հիմքը մեկնաբանելիս պետք է նկատի ունենալ ստորև նշված հանգա-

մանքները.

*Առաջին՝* ՀՀ քր. դատ. օր-ի 35 հոդվածի 1-ին մասի 10-րդ կետում նշվում է «մահացած անձի» մասին, իսկ անձը կարող է մահանալ ինչպես մեղադրյալ ներգրավվելուց հետո, այնպես էլ դրանից առաջ, երբ գտնվում է կասկածյալի կարգավիճակում կամ փաստացի քրեական հետապնդման վիճակում:

*Երկրորդ՝* քրեական հետապնդման ենթարկվող անձի մահվան դեպքում քրեական դատավարությունը կարող է շարունակվել, եթե դա անհրաժեշտ է մահացածի իրավունքների վերականգնման համար:

*3.2. Ենթադրյալ հանցանք կատարած անձի մահվան փաստի ապացուցումը:*

Ենթադրյալ հանցանք կատարած անձի մահը պետք է ապացուցվի և հաստատվի քրեական գործով: Անձի մահը կարող է հավաստվել, օրինակ՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի համապատասխան վկայականով: Միննույն ժամանակ, քրեական վարույթն իրականացնող մարմինը, եթե հիմքեր ունի կասկածի տակ դնելու մահվան վկայականի իսկությունը, օրինակ՝ եթե ներկայացվել է հետախուզվող մեղադրյալի մահանալու փաստը գրանցելու մասին օտարերկրյա պետության վկայական, ապա քննիչն իրավասու է շարունակելու քրեական վարույթը, քանի դեռ քրեական գործով քրեադատավարական գործիքներով չի ապացուցվել անձի մահը: Բացի այդ, մահվան մասին վկայական տրվում է նաև քաղաքացիական դատավարության կարգով ան-

ծին մահացած ճանաչելու դեպքում: ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 1.1-րդ կետով սահմանված է, որ ՀՀ քր. դատ. օր-ի 35 հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը չի տարածվում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով անձին մահացած ճանաչելու դեպքերի վրա: Քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով անձին մահացած ճանաչելը հիմք է անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու համար՝ միայն ՀՀ գլխավոր դատախազի որոշմամբ: Կարծում ենք, որ օրենսդիրը ճիշտ մոտեցում է ցուցաբերել՝ սահմանելով, որ ՀՀ քաղ. դատ. օր-ով սահմանված կարգով մահացած ճանաչվելը քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք չէ: Այս մոտեցումը լիովին բխում է քաղաքացիական և քրեական դատավարության իրավունքի ճյուղերի ինքնավարության սկզբունքից: Բանն այն է, որ քաղաքացիական իրավունքում անձին մահացած ճանաչելն իրավական ֆիկցիայի տեսակ է, որը լուծում է գույքային շրջանառության որոշակիության ապահովման հետ կապված հարցեր: Մինչդեռ քրեական հետապնդման խնդիրներն էապես տարբեր են և անմիջապես չեն առնչվում քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների գույքային հարաբերությունների որոշակիության ապահովմանը: Ուստի՝ անձին մահացած ճանաչելու քաղաքացիաիրավական ֆիկցիան չի կարող ինքնին քրեադատավարական նշանակություն

ունենալ և քրեական հետապնդումը դադարելու հիմք համարվել:

Միննույն ժամանակ, անհասկանալի է, օրենսդրի կողմից կատարված այն վերապահումը, ըստ որի՝ ՀՀ քաղ. դատ. օր-ով սահմանված կարգով անձին մահացած ճանաչելը հիմք է անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու համար՝ միայն ՀՀ գլխավոր դատախազի որոշմամբ: Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնող սուբյեկտի կարգավիճակը չի կարող ազդել իրավունքի ճյուղերի ինքնավարության սկզբունքի բովանդակության վրա և արդարացնել քաղաքացիաիրավական ֆիկցիայի (մահացած ճանաչելու) հիման վրա քրեական հետապնդումը դադարեցնելու հնարավորությունը: Մահացած ճանաչելու փաստը պետք է պարզել և ապացուցել ոչ թե իրավական ֆիկցիաներով, այլ օրենքով նախատեսված քրեադատավարական գործիքներով:

*3.3. Ո՛վ կարող է մահացածի իրավունքները վերականգնելու համար պահանջել շարունակել քրեական վարույթը:*

ՀՀ քր. դատ. օր-ը չի սահմանում անձի մահվան դեպքում քրեական վարույթը շարունակելու պահանջի ներկայացման դատավարական ձևը, մասնավորապես՝ թե ով իրավունք ունի պահանջելու շարունակել քրեական վարույթը:

ՀՀ սահմանադրական դատարանը 21.03.2017թ. ՍԴՈ-1358 որոշման մեջ քրեական վարույթը շարունակելու պահանջ ունեցող անձանց վերաբերյալ օգ-



տագործել է տարաբնույթ եզրույթներ: Այսպես՝ որոշման մեջ օգտագործվում է մի դեպքում «մահացած անձի մերձավորների իրավահաջորդ», երկրորդ դեպքում՝ «մահացածի մերձավոր հարազատներ», երրորդ դեպքում՝ «մահացածի մերձավոր ազգական», չորրորդ դեպքում՝ «մահացածի մերձավոր հարազատներ կամ շահագրգիռ այլ անձ» հասկացությունները:

Գիտության մեջ այս հարցի վերաբերյալ առկա են տարակարծություններ: Ն. Պ. Կիրիլովայի կարծիքով մահացած անձի վերաբերյալ քրեական վարույթը շարունակելու պահանջ կարող են ներկայացնել մահացած անձի հարազատները, շահագրգռված ֆիզիկական և իրավաբանական անձինք<sup>1</sup>: Ն. Վ. Վասիլևը կարծում է, որ՝ որպես իրավական շահ ունեցող անձ, կարող են հանդես գալ մահացած անձի մերձավոր ազգականները, խնամակալները, հոգաբարձուները, իսկ այդպիսի անձանց բացակայության դեպքում՝ պաշտպանը<sup>2</sup>: Բ. Վ. Գավրիլովը նշում է, որ՝ որպես կանոն, այդպիսի պահանջով հանդես են գալիս մահացած անձի հարազատները (ծնողներ, եղբայր, քույր) կամ կազմակերպությունը, որտեղ աշխատում էր այդ անձը<sup>3</sup>:

<sup>1</sup> Кириллова Н. П. Прекращение уголовного дела по реабилитирующим основаниям. Серия Современные стандарты в уголовном праве и уголовном процессе/Науч.ред. Проф.Б.В.Волженкин. СПб.1998. С. 16.

<sup>2</sup> Васильев Н. В. Прекращение уголовного дела по нереабилитирующим основаниям на стадии предварительного расследования. Дисс...канд.юрид. наук. 2002. С. 7.

<sup>3</sup> Гаврилов Б. Я. Комментарий к уголовно-

Կարծում ենք, որ նման պահանջ կարող է ներկայացնել ցանկացած անձ, ով շահագրգռված է քրեական հետապնդման ենթարկված և մահացած անձի իրավունքների վերականգնման հարցում: Նման անձինք կարող են համարվել մերձավոր ազգականները, ազգականները: Բացի այդ, քաղաքացիական հասարակության ինստիտուտները (օրինակ՝ հասարակական, կրոնական կազմակերպություններ, քաղաքական կուսակցություններ) նույնպես իրավունք ունեն մահացած անձի իրավունքների վերականգնման նպատակով պահանջելու շարունակել քրեական վարույթը (actio popularis): Այս իրավիճակը քրեական դատավարությունում actio popularis-ի մասնավոր դրսևորումն է <sup>4</sup> :

ՀՀ սահմանադրական դատարանը 07.09.2010թ. ՍԴՈ-906 որոշմամբ actio popularis-ի վերաբերյալ արտահայտել է իրավական դիրքորոշումներ, որոնց փիլիսոփայությունը կարող է հաշվի առնվել նաև քրեական դատավարությունում մահացած անձի իրավունքները վերականգնելու նպատակով քրեական վարույթը շարունակելիս: Այսպես՝ ՀՀ սահմանադրական դատարանը նշել է. «Ուրիշի փոխարեն դատարան դիմելու իրավունքը գործում է սահմանափակ դեպքերում, նախատեսված է այն իրա-

процессуальному кодексу Российской Федерации. Под общ. ред. В. В Мозякова. М.: Экзамен, 2002.

<sup>4</sup> Полянский Н. К вопросу об участии частных лиц в публичном обвинении: (Принципиальные основания actio popularis в уголовном процессе). М.: тип. Г. Лисснера и Д. Собко, 1915. <http://jurytrial.ru/media/files/library/file30.pdf> (17.04.2016).

վիճակների համար, երբ այն անձը, որի իրավունքները խախտվել են կամ կարող են խախտվել, օբյեկտիվ պատճառներով չի կարող անմիջականորեն դիմել դատարան, կամ օրենսդիրը, հետապնդելով իրավաչափ նպատակ, այլ անձի կամ անձանց, հանրության խախտված իրավունքների պաշտպանությունը կանոնակարգում է հանրային գործառույթի և հանրային շահերի համատեքստում (օրինակ՝ հանցագործությունների կամ համայնքի սեփականության իրավունքի խախտման դեպքում): Մի շարք երկրներում հայց ներկայացնելու իրավասության հիմնական չափանիշ է հանդիսանում «իրավական շահագրգռվածությունը»: Վերջինս դատաիրավական պրակտիկայում ստացել է այնքան լայն մեկնաբանություն, որ հասարակական կազմակերպություններին կամ քաղաքացիական նախաձեռնությամբ հանդես եկող և օրենքով սահմանված կարգով գործունեություն իրականացնող այլ միավորումներին հնարավորություն է ընձեռնվում հանդես գալ որոշակի խմբի կոլեկտիվ իրավունքի պաշտպանությամբ, եթե այդ պաշտպանությունը տվյալ միավորման կոնկրետ նպատակների շրջանակում է»:

Քրեական դատավարությունում հասարակական միավորումները կարող են մահացած անձի իրավունքների վերականգնման համար պահանջել շարունակել դատավարությունը, եթե նրանք այդ հարցում ունեն իրավական շահագրգռվածություն: Նման իրավիճակ կարող է հանդիպել հատկապես այն դեպքում,

երբ մահացածը, ում վերաբերյալ հարուցվել է քրեական հետապնդում, հանրային անձ է: Օրինակ՝ քաղաքական կուսակցության առաջնորդի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում՝ թեկնածուներից որևէ մեկի օգտին քվեարկելու պայմանով կաշառք տալը կազմակերպելու մեղադրանքով, սակայն մեղադրյալը նախաքննության ընթացքում մահացել է: Տվյալ դեպքում քաղաքական կուսակցությունն իրավական շահագրգռվածություն ունի պահանջելու շարունակել քրեական վարույթը:

Մահացած անձի իրավունքները վերականգնելու նպատակով քրեական վարույթը շարունակելու պահանջ ներկայացրած անձն օգտվում է մեղադրյալի ոչ անձնական բնույթի իրավունքներից, օրինակ՝ մեղադրական եզրակացության պատճենը ստանալու իրավունքը, դատաքննությանը մասնակցելու իրավունքը և այլն:

Վիճելի է, թե իրավական շահ ունեցող անձը մասնակցելով վարույթին ինչ կարգավիճակ ունի: Հատկապես մահացած մեղադրյալի մերձավոր ազգականներին քրեական դատավարության ներկայացուցչի կարգավիճակ տալը, չի համապատասխանում ներկայացուցչության հասկացությանը, քանի որ ներկայացուցչական հարաբերություններ առաջանալու համար անհրաժեշտ է, որպեսզի ներկայացուցիչը ներկայացվողի կողմից լիազորված լինի, իսկ այս դեպքում ներկայացվողը մահացած է, հետևաբար մահացածի անունից չի կարող իրականացվել իրավունքներ: Բացի

այդ, ստացվում է, որ ներկայացուցչությունը կատարվում է միակողմանի՝ ներկայացուցչի կամահայտնությամբ, ոչ թե՛ ներկայացվողի:

Այսպիսի ներկայացուցչությունը նախատեսված չէ ո՛չ օրենքով, ո՛չ էլ կողմերի համաձայնությամբ: Նման իրավահարաբերությունները նման են **կվազի-ներկայացուցչության**<sup>1</sup>: Եթե պաշտպանվում են ոչ թե մահացած անձի, այլ նրա մերձավոր ազգականների իրավունքները, ապա բացակայում է ներկայացուցչությունը: Քաղաքացիական դատավարությունում նման անձինք ունեն շահագրգիռ անձի, և ոչ թե ներկայացուցչի կարգավիճակ:

Իրավական շահագրգռվածություն ունեցող անձի պահանջով քրեական վարույթը շարունակվելու դեպքում, եթե մահացած անձն արդարացվում է, ապա ՀՀ քր. դատ. օր-ի 66-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ պահանջի իրավունքը, նշված հոդվածի 4-րդ, 5-րդ, և 9-րդ մասերով, փոխանցվում է նրա մոտակա հերթի ժառանգներին:

*3.4. Քրեական վարույթը շարունակելու պահանջը ներկայացնելու դատավարական ձևը:*

Ինչպես նշվեց, ՀՀ քր. դատ. օր-ը չի սահմանում, թե անձի մահվան դեպքում քրեական վարույթը շարունակելու պահանջն ինչ ձևով պետք է ներկայացվի՝ արդյո՞ք իրավական շահագրգռվածություն ունեցող անձը պետք է նախապես համաձայնություն տա քրեական

հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ, թե՛ քրեական վարույթը շարունակելու պահանջի (քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ առարկության) բացակայությունը պետք է դիտել որպես քրեական հետապնդումը դադարեցնելու համաձայնություն:

ՀՀ սահմանադրական դատարանը 21.03.2017թ. ՍԴՈ-1358 որոշմամբ սահմանել է, որ անձի մահվան հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու կամ գործի վարույթը կարճելու դեպքում անհրաժեշտ է այդ մասին իրազեկել նրա մերձավոր ազգականին, ապահովել վերջինի դիրքորոշման լսելիությունը, մահացածի իրավունքների վերականգնման անհրաժեշտության դեպքում քրեական գործի վարույթը շարունակելու՝ նրա պահանջի բավարարումը և մասնակցությունը մահացածի իրավունքների պաշտպանության և նրա մեղավորության հարցը պարզելուն ուղղված դատավարության ողջ ընթացքում:

Կարծում ենք, որ նշված հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելն իրավաչափ է, եթե բացակայում է իրավական շահագրգռվածություն ունեցող անձի քրեական վարույթը շարունակելու պահանջը: Տեսության մեջ արդարացիորեն նշվում է, որ կարևոր է ապահովել քրեական վարույթը շարունակելու վերաբերյալ մահացածի մերձավորների իրավունքները, որի համար անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել պարզելու մերձավորներին և պարզաբանել քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբե-

<sup>1</sup> Лазарева В. А. Практика прекращения уголовного дела и уголовного преследования в связи со смертью подсудимого. Вектор науки ТГУ. 2014. № 2. С. 113.

ոյալ առարկություն ներկայացնելու իրավունքը<sup>2</sup>:

#### 4. Ամբաստանյալի մահը և դատական ակտը բողոքարկելը

Դատավճիռ կայացնելուց հետո ամբաստանյալի մահվան դեպքում բողոքարկման իրավունքի հարցը քննարկելիս պետք է տարբերակել այն իրավիճակները, երբ ամբաստանյալը մահանում է՝ 1) դատավճիռը հրապարակելուց հետո՝ առանց դատավճիռը բողոքարկելու, 2) դատավճիռը հրապարակելուց հետո՝ մինչև մահանալը բողոքարկելով դատավճիռը:

*4.1. Դատավճիռը հրապարակելուց հետո ամբաստանյալը մահանում է՝ առանց դատավճիռը բողոքարկելու:*

Գերմանական քրեական դատավարությունում, եթե դատավճիռը հրապարակելուց հետո՝ մինչև այն օրինական ուժի մեջ մտնելը, ամբաստանյալը մահացել է, ապա նրա ազգականները չեն կարող այն բողոքարկել: Այս դեպքում ամբաստանյալի մահվամբ քրեական վարույթը դառնում է առարկայազուրկ և վարույթն ավարտվում է, իսկ մահացածը Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համարվում է անմեղ<sup>3</sup>:

«Այդպիսով իրավունքի տեսանկյունից հարցի վերաբերյալ գերմանա-

կան մոտեցումը միանշանակ չէ: Պետք է պարզել, թե արդյո՞ք դատավճիռը հրապարակելուց հետո դատավճիռը կարող է ամբաստանյալի մահվան հիմքով («քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետ») կարճել քրեական գործի վարույթը և դադարեցնել քրեական հետապնդումը: Կարծում ենք՝ այո, քանի որ դատավճիռը հրապարակելուց հետո քրեական վարույթը դեռևս ավարտված չէ: Այսպես՝ «քր. դատ. օր-ի 32-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործով վարույթն ավարտվում է՝ 1) քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշում կայացնելով. 2) գործով դատավճիռը կամ այլ վերջնական որոշումն ուժի մեջ մտնելով, եթե այն չի պահանջում դրա կատարման համար հատուկ միջոցների ձեռնարկում. 3) գործով դատավճիռը կամ այլ վերջնական որոշումն ի կատար ածելու մասին հաստատում ստանալով, եթե այն պահանջում է դրա կատարման համար հատուկ միջոցների ձեռնարկում: Այսպիսով՝ եթե դատավճիռը հրապարակելուց հետո, մինչև դրա օրինական ուժի մեջ մտնելն, առկա է քրեական վարույթ, և դատավճիռը հրապարակելուց հետո ամբաստանյալը մահացել է, իսկ դատական ակտը չի բողոքարկվել, ապա դատարանը պարտավոր է կարճել քրեական գործի վարույթը և դադարեցնել քրեական հետապնդումը: Ասվածը չի վերաբերում այն դեպքերին, երբ գործի վարույթն անհրաժեշտ է մահացածի իրավունքների վերականգնման համար: «քր. դատ. օր-ը չի սահմանում անձի մահվան դեպքում քրեական վարույթը

<sup>2</sup> Калиновский К. Б. Презумпция согласия родственников на прекращение дела в связи со смертью обвиняемого. Уголовный процесс. 2012. № 3. С. 9.

<sup>3</sup> Фридрих-Кристиан Ш., Торстен Ф. Уголовно-процессуальное право Германии. Учебник. М.: Изд. Инфотропик, 2016. С. 218.

շարունակելու պահանջի ներկայացման դատավարական ձևը, մասնավորապես՝ թե ով իրավունք ունի պահանջել շարունակել քրեական վարույթը: Կարծում ենք, որ նման պահանջ կարող է ներկայացնել ցանկացած անձ, ով շահագրգռված է քրեական հետապնդման ենթարկված և մահացած անձի իրավունքների վերականգնման հարցում: Նման անձինք կարող են համարվել մահացածի մերձավոր ազգականները, ազգականները: Քրեական դատավարությունում հասարակական միավորումները կարող են մահացած անձի իրավունքների վերականգնման համար պահանջել շարունակել դատավարությունը, եթե նրանք այդ հարցում ունեն իրավական շահագրգռվածություն: Նման իրավիճակ կարող է հանդիպել հատկապես այն դեպքում, երբ մահացածը, ում վերաբերյալ հարուցվել է քրեական հետապնդում, հանրային անձ է: Օրինակ՝ քաղաքական կուսակցության առաջնորդի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում՝ թեկնածուներից որևէ մեկի օգտին քվեարկելու պայմանով կաշառք տալը կազմակերպելու մեղադրանքով, սակայն մեղադրյալը նախաքննության ընթացքում մահացել է: Տվյալ դեպքում քաղաքական կուսակցությունն իրավական շահագրգռվածություն ունի պահանջելու շարունակել քրեական վարույթը<sup>1</sup>:

Մահացած անձի իրավունքները վե-

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (մինչդատական վարույթ): Մաս 2, Հեղ. հումբ: Գիտ. իմբ. Ա. Ղամբարյան, Եր.: Հրատ. «Տիգրան Մեծ», 2017:

րականգնելու նպատակով քրեական վարույթը շարունակելու պահանջ ներկայացրած անձն օգտվում է մեղադրյալի ոչ անձնական բնույթի իրավունքներից, տվյալ դեպքում՝ դատական ակտը բողոքարկելու իրավունքից:

4.2. *Դատավճիռը հրապարակելուց հետո ամբաստանյալը մահանում է, մինչ այդ բողոքարկելով դատավճիռը:*

Գերմանական քրեական դատավարությունում, եթե ամբաստանյալը մահացել է, սակայն մինչ այդ բողոքարկել է դատավճիռը, ապա դատավճիռը համարվում է անվավեր: Նման դեպքերում դատավճիռն օրինական ուժի մեջ չի մտնում<sup>2</sup>:

«Կողմնակալ իրավունքի տեսանկյունից այս լուծումը նույնպես միանշանակ չէ: Դատավճիռը հրապարակելուց հետո, եթե ամբաստանյալը բողոքարկել է դատավճիռը, այնուհետև՝ մահացել, ապա դատավճիռ կայացրած դատարանն իրավասու չէ ամբաստանյալի մահվան հիմքով կարճել քրեական գործի վարույթը և դադարեցնել քրեական հետապնդումը, քանի որ վերաքննիչ բողոքը վարույթ է ընդունում ՀՀ վերաքննիչ դատարանը, ուստի առաջին ատյանի դատարանը կարող է կատարել միայն ՀՀ քր. դատ. օր-ի 382-րդ հոդվածով նախատեսված գործողությունները՝

1) ներկայացված բողոքի մասին ծանուցել օրենքով նախատեսված անձանց, 2) օրենքով սահմանված անձանց պարզաբանել վերաքննիչ բողոքի պատասխան

<sup>2</sup> Барабанов П.К. Уголовный процесс ФРГ. М.: Изд. Спутник, 2014. С. 336.

ներկայացնելու հնարավորությունը և ներկայացնելու ժամկետը, 3) բողոքարկման համար սահմանված ժամկետն անցնելուց հետո գործը՝ բողոքների վերաբերյալ ստացված պատասխանների հետ, ուղարկել վերաքննիչ դատարան: Կարծում ենք, որ նկարագրված իրավիճակում ՀՀ վերաքննիչ դատարանը նախ՝ պետք է պարզի մահացածի իրավունքները վերականգնելու համար քրեական վարույթը շարունակելու վերաբերյալ իրավական շահ ունեցող անձանց դիրքորոշումը: Եթե նրանք պահանջում են շարունակել քրեական վարույթը, ապա ՀՀ վերաքննիչ դատարանն ընդհանուր կարգով իրականացնում է վերաքննիչ վարույթ: Իրավական շահ ունեցող անձանց պետք է պարզաբանել նաև մինչև վերաքննիչ դատարանում դատական նիստն սկսվելը բողոքը հետ վերցնելու իրավունքը: Մահացածի ազգականների կամ իրավական շահ ունեցող այլ անձանց բացակայության դեպքում կամ նրանց կողմից քրեական վարույթը շարունակելու կամ բողոքը հետ վերցնելու վերաբերյալ դիրքորոշում չներկայացնելու դեպքում՝ ՀՀ վերաքննիչ դատարանը, բողոքը վարույթ ընդունելուց հետո,

ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 1-ին մասի 10-րդ կետով, կարճում է քրեական գործի վարույթը և դադարեցնում է քրեական հետապնդումը:

ՀՀ քր. դատ. օր-ի 426.3-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ դատապարտյալի մահն արգելք չէ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով դատական ակտը վերանայելուն՝ դատապարտյալի կամ այլ անձանց իրավունքների վերականգնման նպատակով:

### 5. Առաջարկություններ

ՀՀ քր. դատ. օր-ում անհրաժեշտ է հստակ կարգավորել մեղադրյալի մահվան դեպքում քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական վարույթը շարունակելու դատավարական ձևի առանձնահատկությունները: Մասնավորապես՝ պետք է հստակեցնել իրավական շահագրգռվածություն ունեցող անձանց կողմից քրեական վարույթը շարունակելու մասին պահանջը ներկայացնելու ընթացակարգերը, դատական ակտերի բողոքարկման առանձնահատկությունները և այլն: